

**Փարաջանովն իր երրորդ հայրենիքի՝
Ուկրաինայի "ազգային լեգենդն" է**

~

***Parajanov is the National Legend of his Third
Homeland - Ukraine***

***Paradžanov je národní legendou své třetí vlasti
– Ukrajiny***

by

Anna Harutyunyan

Public Radio of Armenia / Public Radio of Armenia

SYNOPSIS

Փարաջանովն իր երրորդ հայրենիքի՝ Ուկրաինայի "ազգային լեգենդն" է

Անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը հետմահու պարգևատրվել է «Ուկրաինայի ազգային լեգենդ» մրցանակով: Նախագահ Վլադիմիր Չելենսկին Փարաջանովին ու ևս 10 անվանի անձանց բարձրագույն մրցանակը հանձնել է Ուկրաինայի անկախության օրվան ընդառաջ: «Սա հարգանք է, պատիվ ու արժանապատվություն: Ահա թե ինչպես է Ուկրաինայի պետությունը շնորհակալություն հայտնում իր ժողովրդին, իր հերոսներին, իր լեգենդներին, գնահատանքի արժանի մարդկանց, նաև նրանց, ովքեր, ցավոք, այլևս մեզ հետ չեն՝ ասել է Վլադիմիր Չելենսկին: Ուկրաինան Փարաջանովի երրորդ հայրենիքն էր, կամ այն երկիրը, որը ազատագրվելուց 50 տարի հետո արդարացրեց:

Parajanov is the National Legend of his Third Homeland - Ukraine

Renowned film director Sergei Parajanov has been posthumously awarded the title of "National Legend of Ukraine". President Volodymyr Zelenski presented this highest national honor to Parajanov and ten other distinguished individuals ahead of Ukraine's Independence Day. "This is about respect, dignity and honor. This is how the Ukrainian state expresses gratitude to its people, its heroes, its legends – to those who deserve recognition including those who, unfortunately, are no longer with us" said President Zelensky. Ukraine was Parajanov's third homeland – the country that, fifty years after his imprisonment, ultimately restored justice by rehabilitating him.

Paradžanov je národní legendou své třetí vlasti – Ukrajiny

Renomovanému filmovému režisérovi Sergeji Paradžanovovi byl posmrtně udělen titul „Národní legenda Ukrajiny“. Prezident Volodymyr Zelenskyj udělil toto nejvyšší státní vyznamenání Paradžanovovi a dalším deseti významným osobnostem před Dnem nezávislosti Ukrajiny. „Jde o úctu, důstojnost a čest. Ukrajinský stát tak vyjadřuje vděčnost svému lidu, svým hrdinům, svým legendám – těm, kteří si zaslouží uznání, včetně těch, kteří již bohužel nejsou mezi námi,“ řekl prezident Zelenskyj. Ukrajina byla Paradžanovovou třetí vlastí – zemí, která po padesáti letech od jeho uvěznění nakonec obnovila spravedlnost jeho rehabilitací.

Original script

(00:00- 00:10)

я Сергей Параджанов, я армянин, жил на Украине жена была моя украинка сын был украинец всё было будто бы хорошо.

(0:13 - 0:26)

Ապրել, սիրել, սիրվել, հասնել մասնագիտական հաջողությունների, դատապարտվել ազատազրկվել ու արդարացվել: Սերգեյ Փարաջանովին Ուկրաինայի հետ կապող պատմությունները շատ են, կինոռեժիսորն անգամ Ուկրաինան իր հայրենիքներից մեկն էր համարում.

(00:26- 00:30)

երգում է ուկրաիներեն

(0:31 – 0:40)

Ուկրաինայի Նախագահ Վլադիմիր Չելենսկին Ուկրաինայի անկախության օրվան ընդառաջ Սերգեյ Փարաջանովին հետմահու «Ուկրաինայի ազգային լեգենդ» մրցանակ է շնորհել.

(00:40 – 00:44)

երգում է ուկրաիներեն

(0:44 – 0:52)

Երբ Փարաջանովին իր հայրենիքի կամ ազգության մասին էին հարցնում, հպարտությամբ արձանագրում էր, որ միանգամից 3 հայրենիք ունի:

(00:53- 00:56)

Я родился в Грузии, жил на Украине, умру в Армении.

(0:57 – 1:20)

Հայաստանը, Ուկրաինան ու Վրաստանը. Վրաստանը այն երկիրն է, որտեղ ինքը ծնվել է, մեծացել ու ձևավորվել որպես անհատ, Ուկրաինան այն երկիրն է, որտեղ ինքը ձևավորվել ու կայացել է որպես կինոռեժիսոր և Հայաստանը՝ իր պատմական հայրենիքը, իր ծնողների հայրենիքը, որտեղ ինքը պատկերացնում էր իր կյանքի վերջին տարիները:

(1:20 – 1:38)

Սերգեյ Փարաջանովի թանգարանի գլխավոր ֆոնդապահ Մարիաննա Մանուչարյանը հիշում է՝ Ուկրաինան Փարաջանովի կենսագրության ամենակարևոր կտորներից մեկն է. Մոսկվայում համալսարանն ավարտելուց հետո, Նրան, ինչպես սովետական տարիներին ընդունված էր, գործուղում են Կիևի կինոստուդիա: Հենց այստեղ է սկսվում Փարաջանովի կյանքի ուկրաինական շրջանը

01.38- 01:54

я на Украине сделал восемь, фильмов девятый был - Тени забытых предков и это было всё время когда зашёл на свой материал, на своё понимание, на свою народную тематику - где

English script

(00:00- 00:10)

I am Sergei Sergei Parajanov, I am Armenian, I lived in Ukraine, my wife was Ukrainian, my son was Ukrainian, and everything seemed to be fine.

(0:13 - 0:26)

To live, to love, to be loved, to achieve professional success, to be condemned, imprisoned, and then acquitted. The stories connecting Sergei Parajanov with Ukraine are many; the film director even considered Ukraine one of his homelands.

(00:26- 00:30)

singing in Ukrainian

(0:31 – 0:40)

Ahead of Ukraine's Independence Day, Ukrainian President Volodymyr Zelensky posthumously awarded Sergei Parajanov the "National Legend of Ukraine" award.

00:40- 00:44

singing in Ukrainian

(0:44 – 0:52)

When asked about his homeland or nationality, Parajanov proudly stated that he had three homelands at once:

(00:53- 00:56)

I was born in Georgia, lived in Ukraine, and I will die in Armenia.

(0:57 – 1:20)

Armenia, Ukraine, and Georgia. Georgia is the country where he was born, grew up, and formed as an individual. Ukraine is the country where he developed and established himself as a film director, and Armenia is his historical homeland, the homeland of his parents, where he envisioned spending the last years of his life.

(1:20 – 1:38)

Marianna Manucharyan, chief fund keeper of the Sergei Parajanov Museum, recalls that Ukraine is one of the most important parts of Parajanov's biography. After graduating from university in Moscow, he was assigned to the Kyiv film studio, as was customary in Soviet times. This is where the Ukrainian period of Parajanov's life began.

(01:38- 01:54)

In Ukraine, I made eight films. The ninth one was Shadows of Forgotten Ancestors, and that was the moment I finally got into my own material, my own understanding, my own national thematics -

была этнография. Где был бог, где была любовь и где была трагедия.

(1:55 – 2:22)

Սկզբնական շրջանում, ինչպես բոլոր կինոռեժիսորները, այնպես էլ Փարաջանովը, նկարահանում էր, այսպես ասած, պատմիրված ֆիլմեր, ինչպես ընդունված էր սովետական միությունում, ուր կար ցենզուրա, կար պատվեր ու պահանջներ, բայց դրանից հետո՝ 1963թ, Փարաջանովը նկարահանում է «Մոռացված նախնիների սովերները» ֆիլմը, որը միջազգային մեծ արձագանք է ունենում ու նրան բերում մեծ ճանաչում», - պատմում է թանգարանի գլխավոր ֆոնդապահը:

(2:22 – 2:41)

Փառքից ու տասնյակ մրցանակներից բացի՝ ուկրաինական էթնիկ խմբի մասին պատմող ֆիլմը Փարաջանովին նաև մեղադրանքներ է բերում: Այն ժամանակաշրջանում, երբ Սովետական միությունը փորձում էր ստեղծել «մեկ ազգ, մեկ մշակույթ» գաղափարախոսությունը, Փարաջանովը համարձակվում է մեծ էկրան բարձրացնել ազգի, կրոնի, մշակույթի ու ծեսերի մասին պատմող ֆիլմ:

(02:41- 03:02)

Тени забытых предков когда Министерство увидела на экранах и поняла, что она нарушила принципы соцреализма - она ничего не могла сделать, потому что через 2 дня был юбилей Кольчубинского - 100 дня со дня рождения, 100 лет. понимаете и они растерянные сказали: «Ну ладно идите, покажите», в надежде, что они потом с ним справятся.

(3:02 – 3:08)

Փարաջանովն ասում էր՝ ես էլ սարեցի մարդ եմ ու նկարահանել եմ ֆիլմ սարերում ապրող ուկրաինացիների մասին:

(03:09 – 03:11)

Мол, я горец и я сделал фильм о горах Украины.

(3:11 – 3:44)

Փարաջանովն այն համարձակներից էր, ով ներկայացրեց գուցուների մշակույթը, կրոնը, ավանդույթները, այսինքն դեմ գնաց սովետական ընդունված ստանդարտներին: Դրանից հետո նա դարձավ ոչ այնքան սիրելի մարդ սովետական իշխանության համար»: Հենց դրանից հետո էլ սկսվում են Փարաջանովի նկատմամբ հետապնդումները, նրան երկար տարիներ թույլ չեն տալիս դուրս գալ սովետական միության սահմաններից, մասնակցել միջազգային կինոփառատոնների: 1973-ին հենց Ուկրաինայում Փարաջանովին ձերբակալում են, մեղադրում բռնաբարության ու համասեռամոլության մեջ:

(3:45 – 4:03)

Այն ժամանակ սա մի մեղադրանք էր, որը մարդուն կվերացներ ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես, և հենց դրան էլ ձգտում էր Սովետական կառավարությունը, որովհետև բոլոր արգելքները Փարաջանովին չէին ստիպում հրաժարվել ազատ ստեղծագործելուց ու ազատ արտահայտվելուց», - ասում է Մարիաննա Մանուչարյանը:

where there was ethnography, where there was God, where there was love, and where there was tragedy.

(1:55 – 2:22)

Initially, like all film directors, Parajanov filmed, so to speak, 'commissioned films,' as was accepted in the Soviet Union, where there was censorship, orders, and demands. But after that, in 1963, Parajanov directed 'Shadows of Forgotten Ancestors,' which received wide international acclaim and brought him great recognition," recounts the museum's chief fund keeper.

(2:22 – 2:41)

Besides fame and dozens of awards, the film, which told the story of an ethnic Ukrainian group, also brought Parajanov accusations. At a time when the Soviet Union was trying to create the ideology of "one nation, one culture," Parajanov dared to bring a film about nation, religion, culture, and rituals to the big screen.

(02:41- 03:02)

When the Ministry saw Shadows of Forgotten Ancestors on screen and realized that it violated the principles of Socialist Realism, they could do nothing. That's because two days later was the centenary of Kotsiubynsky's - 100 years. You see? And they, bewildered, said: 'Well, alright, go ahead and show it' hoping that they would deal with it later.

(3:02 – 3:08)

Parajanov used to say, "I am also a mountain man, and I made a film about Ukrainians living in the mountains."

(03:09 – 03:11)

Basically, I am a highlander and I made a film about the highlanders of Ukraine.

(3:11 – 3:44)

Parajanov was one of those brave individuals who presented the culture, religion, and traditions of the Hutsuls, meaning he went against the accepted Soviet standards. After that, he became less favored by the Soviet authorities."

It was precisely after this that the persecution against Parajanov began. For many years, he was not allowed to leave the borders of the Soviet Union or participate in international film festivals. In 1973, Parajanov was arrested in Ukraine itself, accused of rape and homosexuality.

(3:45 – 4:03)

At that time, this was an accusation that would destroy a person not only physically but also psychologically, and that is precisely what the Soviet government sought, because all the prohibitions did not force Parajanov to give up free creation and free expression," says Marianna Manucharyan.

(4:03 – 4:17)

Կինոռեժիսորը ուկրաինական բանտում 4 տարի է անցկացնում: Հարցազրույցներում ազատագրված ու դրան հաջորդող տարիների մասին խորը ցավով ու ավստսանքով է խոսում, շեշտում՝ իր անձնական ու ստեղծագործական կյանքից 15 տարի պարզապես խլել են:

(04:17 – 04:26)

Испорчено 15 лет жизни, с результатами после тюремного ареста, после досидки..., пересидки

(4:26 – 4:41)

Նույնիսկ անազատությունից հետո իր երրորդ հայրենիքի նկատմամբ վերաբերմունքը չի փոխում: Փարաջանովին Ուկրաինայի հետ հավերժ կապում են նաև երկրորդ կինն ու որդին: Չնայած բանտից հետո այլևս Ուկրաինա չի վերադառնում, բայց չի դադարում սիրել ու գնահատել այդ երկիրը:

(4:41 – 5:17)

Փարաջանովի երկրորդ կինը՝ Սվետլանան, ուկրաինուհի էր: Իհարկե, նրանց որդու ծնվելուց հետո նրանք բաժանվում են, բայց մինչև կյանքի վերջ մնում են լավ ընկերներ ու լավ բարեկամներ: Ստացվում է, որ մասնագիտությունից բացի Ուկրաինայի հետ կապող ամենամոտր օղակը նրա կինն ու որդին էին, որոնք մինչև իրենց կյանքի վերջ ապրեցին Կիևում:

(05:17- 05:22)

երգում է ուկրաիներեն

(5:23 – 5:38)

Դատվելուց 50 տարի անց՝ ծննդյան 100-ամյակին ընդառաջ, Ուկրաինայի վերականգնման ազգային հանձնաժողովը 2024-ի տարեսկզբին արդարացրեց կինոռեժիսորին: Ուկրաինայի ազգային հիշատակի ինստիտուտը այս փաստը անգերազանցելի ու նշանակալի իրադարձություն որակեց.

(4:03 – 4:17)

The film director spent four years in a Ukrainian prison. In interviews, he spoke with deep pain and regret about his imprisonment and the years that followed, emphasizing that 15 years of his personal and creative life were simply taken away from him.

(04:17 – 04:26)

Fifteen years of my life were ruined, with the consequences following the prison arrest, after serving the time... the long imprisonment.

(4:26 – 4:41)

Even after his release from imprisonment, his attitude towards his third homeland did not change. Parajanov is also forever linked to Ukraine through his second wife and son. Although he never returned to Ukraine after prison, he never ceased to love and appreciate that country.

(4:41 – 5:17)

Parajanov's second wife, Svetlana, was Ukrainian. Of course, they separated after their son was born, but they remained good friends and good relatives until the end of their lives. It turns out that, besides his profession, the strongest link connecting him to Ukraine was his wife and son, who lived in Kyiv until the end of their lives.

(05:17- 05:22)

singing in Ukrainian

(5:23 – 5:38)

Fifty years after his conviction, and ahead of his 100th birthday, the National Commission for the Rehabilitation of Ukraine acquitted the film director at the beginning of 2024. The Ukrainian Institute of National Memory called this fact an unparalleled and significant event.